2019թ. հոկտեմբերի 15-ից 18-ը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը և Երևանի պետական համալսարանը Երևանում կազմակերպում են հոբելյանական միջազգային գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

Մինչև սույն թվականի սեպտեմբերի 17-ը հետևյալ էլեկտրոնային հասցեով vorskanyan.heriknaz@mail.ru պետք է ուղարկել զեկուցման վերնագիրը և հիմնադրույթները 300 բառի սահմանում (հայերեն, ռուսերեն կամ անգլերեն), հեղինակի անուն և ազգանունը, կոչումը, այն հաստատությունը, որտեղ աշխատում է, էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը:
Զեկուցման թեմայի ընդունման մասին տեղյակ կպահվի հիմնադրույթի ստացումից հետո մեկ շաբաթվա ընթացքում: